ՀՀ, ք. Երևան, 0009, Տերյան փ. 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ
Հեռ: +374 10 514 315, ֆաքս: +374 10 514 317, էլ. փոստ: aspired@engl.com

2020թ.-ի փետրվարի 26-ին ԳԱՏՕ ծրագրի գրասենյակում տեղի է ունեցել նախամրցութային հանդիպում՝ հետաքրքրված հայտատուների հետ

Պարզաբանումներ
ՀՆՀ # 190220-01 Խողովակների, կցամասերի ձեռքբերում և շինարարական աշխատանքների իրականացում Խաչփար գյուղի ոռոգման համակարգի օպտիմալացման ծրագրի շրջանակում

Ամիս, ամսաթիվ՝ 26 փետրվարի, 2020թ. Վայր՝ ԱՄՆ ՄԶԳ ԳԱՏՕ ծրագրի գրասենյակ (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ)

N	Հարց	Պատասխան
1.	Ինչպե՞ս ձեռք բերել DUNS համար՝ հայտում ներկայացնելու համար:	Հայտատուի կողմից կտրամադրվի որևէ կոնտակտային տվյալ ԳԱՏՕ ծրագրի գրասենյակի կողմից էլեկտրոնային հասցե ուղարկելու համար, որտեղ անհրաժեշտ տվյալների գրանցմամբ հնարավոր կլինի ձեռք բերել DUNS համարը: Բոլոր ԱՄՆ և օտարերկրյա կազմակերպու-թյունները, որոնք ստանում են 25,000 ԱՄՆ դոլար և ավելի բարձր արժողությամբ առաջնային պայմանագիր/գնման պատվեր կնքելու հնարավորություն, պարտավոր են պայմանագիրը կնքելուց առաջ ստանալ DUNS համար: Կազմակերպություններն ազատվում են այս պահանջից, եթե բոլոր աղբյուրներից նրանց ստացած համախառն եկամուտը նախորդ ֆիսկալ տարում ցածր է եղել 300,000 դոլարից: Նման հիմքով ազատվելու համար ME&A-ն յուրաքանչյուր հայտատուից պահանջում է ստորագրել ինքնահավաստագիր:
2.	Սույն ՀՆՀ-ի հավելված Ա-ում պահանջվում է բաղադրիչները ներկայացնել մի քանի կետով: Կարո՞ղ	Ոչ: Պետք է ներկայացնել բաղադրիչների բացվածքը ըստ ծավալաթերթի:

	ենք բաղադրիչները ներկայացնել հանրագումարով:	
3.	Կա՞ պահանջ բանկային երաշխիք ներկայացնելու:	Սույն ՀՆՀ-ում նման պահանջ չկա:
4.	Կանխավճար լինելու՞ է:	Կանխավճար չի տրվելու:
5.	Ըստ սույն ՀՆՀ-ի պահանջի՝ հայտեր կարող են ներկայացնել այն կազմակերպությունները, որոնք ունեն նմանատիպ ծրագրերի իրականացման փորձ: Ինչ՞ նկատի ունեք նմանատիպ աշխատանքներ ասելով:	Սույն ՀՆՀ-ում կա պահանջ ներկայացնել վերջին երեք տարիների ընթացքում հայտատուի կողմից կառուցված առնվազն մեկ ոռոգման ցանցի տեղադրման փորձ: Ընդհանուր առմամբ նկատի ունենք ոռոգման ոլորտի աշխատանքներ:
6.	Արդյո՞ք հայտատուները ներկա են գտնվելու հայտերի բացմանը:	Հայտատուները չեն մասնակցում հայտերի բացմանը: Հայտ ներկայացրած բոլոր կազմակերպությունները կստանան ծանուցում, որում նշված կլինի հաղթող կազմակերպության անվանումը և առաջարկած գինը: